Որդւոյն Աստուծոյ, կալեալ զձեռանէ մխմխանց՝ եղաք ուխտս եւ կռեցաք դաշինս որպէս զի եղիցի այս օգուտ մերոյնոցս ամենայնի, ներկայիցս եւ ապագայիցն եկեղոց նպատակ: Եւ զայսոսիկ պարտ էր մեզ անջրելի պահել հաստատութեամբ, ըստ Դաւթի վկայութեան, Ուխտս զիք եւ կատարեցէք, եւ դարձեալ ըստ Սողոմոնի, Զինչ եւ ուխտիցես դու Աստուծոյ, մի՛ յամիցես հատուցանել զնա, որչափ եւ ուխտիցես հատո՛, զի լաւ է քեզ չուխտել քան ուխտել եւ ոչ հատուցանել: Եւ զի հարկ էր քեզ սիրելւոյդ զնոյն ուխտ եւ դաշինք ըզմտաւ ածել միշտ եւ պահել ի նոյնութեան, որպէս եւ եան ունէի ծրարեալ պահեստի ի մերում մարմնեղէն սենեկի: Բանզի յայնմ օրէ մինչ չեւ ձեռնամուխ լինելն քո յայդմ գործս՝ (այսինքն մինչեւ հակաթոռ նստիլը) անարատ ունէի զսէր ուխտադրութեանն, զի վկայն իմ յերկինս է եւ իրաւազէտն ի բարձունս, ըստ Յոբայ: Իսկ յայս երիս ամս զինչ անցք անցին, այն ամենայն ոչ ըստ կանոնաց էր, եւ ոչ կենարարին պատուիրան, այլ սողտանաց էր գործ: Զի դատակ կորստեան եւ առիթն ամենայն չարեաց բաղմահնար մեքենայիւք մարտ եղեալ ոգորէր առ սուրբ տեղիսն եւ առ յանդամս Քրիստոսի, զի ըստ իւրոյ բաղձանացն յանկ հանցէ որպէս եւ է իւրն գործ սովորական: Բայց գոհութիւն եւ փառք Փրկչին մերոյ, զի լուաւ պաղատանաց ծառայից իւրոց, եւ յամօթ արար զրանսարկու պիղծն, եւ զիւր վաղալար յորոգայթն մանրեալ փշրեաց, եւ ըստ կամաց իւրոց զիւրն խաղաղութիւն տնօրինեալ հաստատեաց, թէ՛ այսր եւ թէ այդր, այսուհետեւ մի՛ եւս աշխատ արասցես զիմս ծերութիւն: Դարձեալ ծանիր, սիրելի՛, զի մեք յաւուր երկուշաբթին որ զկնի Պայծառակերպութեանն՝ միջնորդութեամբ Սարգիս վարդապետին պատրիարքի եւ հայցուածօք քահանայից եւ ժողովրդոց՝ արարաք խաղաղութիւն եւ հաշտութիւն, ապա եւ զկնի քանի աւուրց անցելոյ, ի յաւուրս Փոխման տօնի բարեկենդանի Սուրբ Աստուածածնին, եկն ուրախարար թուղթ Մարտիրոս վարդապետին, յորում գրեալ էր զխաղաղութենէ ձերմէ: Եւ եղեւ կրկին ուրախութիւն եւ ցնծութիւն բոլոր ժողովրդեան, որով ամենեքեան հանդիսացեալք Աստուծով զփառատրականն երգէին նրւագ, որ երարձ զխռովութիւն եւ հաստատեաց զխաղաղութիւն: Եւ ես իմա՛, սիրելի, սիրելւոյն Տեառն զիսօսս. Եթէ սիրաք մեր զմեզ ոչ սղտանիցեն՝ համարձակութիւն ունիմք եւն.: Նաեւ սուրբ հայրն Եւագր գրէ. Նիստ դատաւոր քոյ սրտիդ յատենի դատել եւ քննել: Զի թէ ճշմարտապէս քննիցեմք, չունիմք պատասխանի Աստուծոյ. զի Տէրն մեր հրամայէ... Զիջցո՛ւք, ո՛վ սիրելի, զիջցո՛ւք, զի կարասցուք տալ պատասխանի այնմ որ մինչ ի յետին բնիոնն պահանջէ: Եւ արդ ըստ խնդրոյ Մարտիրոս վարդապետին եւ ըստ բաղձանաց ժողովրդեանն, անկեղծ կայծ բանի մարմնեղէն առաղաստի յայտնապէս ծրեցի: Իսկ եթէ ըստ մարդկային բարուց մտածիցեմք՝ պատճառելով զմիմիեանս, մնայ սկզբնաշարին աշխարհակէզ հուրն անշիջելի ի մէջ ողորմելի եւ տառապեալ հայազուն զարմի, եւ լինի բազում չարեաց առիթ եւ անմեղ հոգւոց կորուստ, ներկայիս եւ ապագայից զկնի եկելոց, եւ մեք մնամք դատապարտ եւ անպատասխանի առաջի անաչառ դատաւորին՝ զբաղմացն պատիժ կրելով անձամբ: Ապա թէ զիջանիս ի հրամանս մեր եւ ի կոչ ժողովրդեանս՝ կատարելով զՔրիստոսի հրաման, ոչ սակաւ վնասակար իրաց հերքումն լինի եւ յոլով բարեաց սկիզբն եւ յիշատակ բարի զկնի մեր եւ ուղիղ պողոտայ զհետ եկեղոցն...: Գրեցաւ ի թվին ՌՃԺԶ (1667) յամսեանն սեպտեմբերի ԻԴ (24) ի մայրաքաղաքն Ստամպոլ ի դուռն Սուրբ Լուսաւորիչ եկեղեցւոյն:»

«Այլ արդ ի վերայ այնց գրեցելոց գերազանցապէս ընտրելի եղեւ երկոքեանս այսոքիկ տեղի, այսինքն՝ կամ ի Կոստանդնուպօլիս եւ կամ ի Զմիւռին պատահիլ միմեանց առ այս գործ: Որոց պատճառ է վասն առաջնոյն ըստ հանդիսաղրութեան տեղւոյն եւ ըստ հաստատութեան դաշնադրութեան, եւ վասն երկրորդին՝ ըստ նոյն դիտաւորութեան առնիլ կիրս, եւ յաւէտ առ ի բժշկութիւն